ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հեղինակային կրթությունը մաթեմատիկայի իմ դասին

Կատարող՝ Սահակ Փարվանյան

Դպրոց՝ Երևանի Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ Մաթեմատիկա

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների»

Խմբի պատասխանատու՝ Զինա Խաչատրյան

2023-2024 ուստարի

Հեղինակային կրթությունը մաթեմատիկայի իմ դասին

Երևանի Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցի ուսուցիչը ունի բոլոր հնարավորությունները յուրովի ներկայացնելու առարկան, դասը, յուրաքանչյուր նյութ, թեմա:Հեղինակ ուսուցչի դասագիրքը դա իմ տարերքն է, որտեղ ես գտնում եմ ինձ իմ հրապարակած դասագրքերում:

Մաթեմատիկայի, հանրահաշվի և երկրաչափության առարկաների իմ դասաժամերին սովորողը, որը ունի բնավորություն աշխատել օրվա համար նախատեսվածի չափով, հետևում է օրվա առաջադրանքների փաթեթին, իսկ նա, ով ցանկանում է ավելին սովորել, արագ ավարտել փաթեթն ու լրացուցիչ աշխատել շարունակում է աշխատել ընդհանուր փաթեթով՝ առաջ անցնելով ընկերներին, որից հետո ուսումնասիրում է նոր, հնարավոր է նաև հանրակրթական ծրագրից դուրս թեմաներ իր ընտրությամբ կամ լուծում առավել բարդ խնդիրներ՝ Կենգուրու մրցույթին կամ Օլիմպիադային ներկայացված խնդիրներ:

Ուսումնական ծրագրի մասն են կազմում նաև ուսումնական տարբեր դասեր, նախագծեր, թիմային աշխատանքներ:
Հատուկ առանձնացնում եմ «Մաթեմատիկա առանց բանաձևերի» դասընթացը, որի յուրաքանչյուր դաս փորձում եմ կազմակերպել այնպես, որ լինի մի քանի նախագծերի համախումբ, և յուրաքանչյուր սովորող ինքն ընտրի դրանցից որն է իրեն հետաքրքիր կամ միգուցե բոլորն էլ հետաքրքրում է, և կարողանում է, ցանկանում է բոլորն էլ կատարել:
Դասը ներառող առանձին կետերն են

- Ամենատարբեր խնդիրներ (որոնք անհրաժեշտ է լուծել առանց բանաձևեի և բանաձևերով);
- Մաթեմատիկական ֆլեշմոբ;
- Անդրադարձ Մաթեմատիկայի իմ ստեղծաց դասագրքերին;
- Հայտի մաթեմատիկոսները և նրանց գործունեությունները;
- Ինքնակրթության հարթակներ;
- Խաղեր, գլուխկոտրուկներ, վիկտորինաներ;

Հեռավար, առցանց, ընտանեկան, թե՞ առկա կրթություն

2020 թվականը ներխուժեց մեր կյանք, մեր առօրյան փակեց բոլոր ճանապարհներն ու ապրելու, ստեղծելու, ստեղծագործելու, կրթվելու, կրթելու, լինելու այլընտրանքային տարբերակներ փնտրել պարտադրեց: Մեր դպրոցում արագ կողմնորոշվեցինք ու առաջիններից էինք, որ սկսեցինք հեռավար-առցանց ուսուցումը:
Առաջարկում եմ կարդալ գործընկերներիս և կրթահամալիրի ղեկավարների հրապարակումները, որոնք կիսվում են այդ շրջանում իրենց աշխատանքային փորձով.

- ✓ Որ ընտանեկան ուսուցումը լինի գրավիչ…
- ✓ Անհատն է ու իր կրթական պատվերը
- ✓ Հեռավար դպրոցը, ընտանեկան կրթությունը պետք է օգնեն առկա դպրոցին
- ✓ Բավական հետաքրքիր պրոցես է
- ✓ Առցա՞նց, թե՞ հեռավար կրթություն
- ✓ Սովորողն իր կյանքի հեղինակն է…

Հեռավար-առցանց ուսումնական շրջանի ամփոփում

Մարտ -մայիս ամիսների հեռավար-առցանց աշխատանքն իրականացվել է ըստ անհատական աշխատաժամանակի: Սովորողների հետ աշխատանք իրականացվել է ինչպես նամակագրական կապի /էլ. փոստի/ միջոցով, այնպես էլ այս ընթացքում անցկացվել են բազմաթիվ տեսակապով դասընթացներ, հանդպում-քննարկումներ: Այն սովորողները, որոնք ունեցել են բարդությունները , չեն կարողացել սովորել ընդհանուր նյութը, թեման կամ կատարել դրանց առաջադրված առաջադրանքները լրացուցիչ նամակով ստացել են այլ առաջադրանքներ: Լրացուցիչ առաջադրանքներ ստացել են նաև նրանք, ովքեր ցանկացել են ավելին աշխատել և ստանալ լրացուցիչ գիտելիքներ: Առաջադրանքների ամբողջական փաթեթը տեղադրված է Գուգլ-հարթակում և հրապարակված է նաևՀեռավար -առցանց աշխատանքների բաժնում: Վերջինում առկա են ինչպես տարբեր առաջադրանքների, խնդիրների փաթեթներ, լրացուցիչ քննարկման նյութեր, այնպես էլ բոլոր առաջարկված նախագծերն ու դրանց ամփոփումները:
Այս ընթացքում իրականացվել են մի շարք ուսումնական և հետազոտական նախագծեր, որոնք ուղղված են եղել մեծացնել հետաքրքրությունը դեպի առարկան և դրդելու սովորողին ինքնակրթության, գիտելիքների նոր պաշարի ձեռք բերման և հետազոտական ու վերլուծական նոր հմտությունների ձևավորմանը:
Սովորողի կողքին միշտ ընտանիքն է եղել՝ օգնելով ուսուցչին , սովորողին, լիարժեք իրականացնել ինքնակրթության, հեռավար-առցանց աշխատանքի և՛ նոր, և՛ միևնույն

ժամանակ արդեն ծանոթ այս փուլը: Ծնողի ձեռագիրն ակնհայտ էր սովորողի կրթության այս փուլում, նրա աշխատանքներում, և արդարացի կլինի, որ ծնողը ևս մասնակից լինի սովորողի աշխատանքների գնահատմանը, կատարի իր առաջարկները:
Արտակարգ իրավիճակը արտակարգ նոր հնարավորություններ է ստեղծել նաև ուսուցչի, դասավանդողի համար ինքնակրթվելու, ուսումնասիրություններ կատարելու և դրանք հրապարակելու համար:

Միջառարկայական համագործակցություն

Սովորողների սիրելի մաթեմատիկան աստիճանաբար դառնում է «բարդ և անհասկանալի», երբ այն բաժանում ենք հանրահաշիվ և երկրաչափություն առարկաների: Խաղերով ու գույներով, պարզ հաշվարկներով մաթեմատիկային խառնվում են տառերն ու անհասկանալի արտահայտությունները, ամենատարբեր բանաձևերը, ինչպես նաև անհաժեշտ է լինում խնդիրները լուծելու համար ունենալ տեսական գիտելիքների բազա և դրանք միմյանց կապելու կարողություն ու հնարամտություն: Ճիշտ այսպես է մտածում յոթերորդ և ութերորդ դասարաններում սովորողների մի մեծ զանգված: Նմանօրինակ կարծիքը փոփոխելու և՛ սովորողի, և՛ շատ ծնողների ձևավորված կարծրատիպերը կոտրելու ու ոչնչացնելու համար լավագույն օգնությունը մաթեմատիկական նախագծերը, հետազոտական աշխատանքներն են, որոնք ցույց են տալիս առարկայի կիրառումն ու օգտակարությունը առօրյա կյանքում և աշխատանքում: Այդօրինակ նխագծերի շարքին են պատկանում նրանք, որոնք ենթադրում են միջառարկայական համագործակցություններ: Վերջինների թվին է պատկանում սովորողների կողմից ամենասիրելի նախագծերից մեկը, որ մաթեմատիկա և քիմիա առարկաների համագործակցության հաջողված օրինակ է:
Նախագիծն իրականացրել եմ Երևանի Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցի միջին և ավագ դպրոցի սովորողների մասնակցությամբ, իհարկե նաև դասավանդողների խորհրդատվությամբ: Ֆիզիկական միջավայրում աշխատել են ութերորդ դասարանների սովորողները, ապա նաև նախագիծը շարունակել են առցանց-հեռավար հարթակում, որտեղ նույն ութերորդցիները որպես սովորող-սովորեցնող նախագիծ ներկայացրել են յոթերորդ դասարանների սովորողներին:

Կլոր սեղան քննարկման՝ ներկայացրել են այն, պատմել են իրենց կատարած աշխատանքների, ուսումնասիրությունների, փորձերի մասին, ցույց են տվել խնդիրների լուծման տարբերակներ և առաջարկել փորձեր, որի արդյունքում մի շարք սովորողներ հետաքրքրվելով թեմայով միացել են նախագծային աշխատանքին:

Դու ունես ազատ տեղաշարժվելու իրավունք

Այսօր Հայաստանում ապրում է հաշմանդամություն ունեցող ավելի քանի 193 հազար մարդ. որոնցից 8200-ը երեխաներ են:
Հաշմանդամը մեր երկրում մարդ է, ով միշտ կարիք ունի որևէ օգնության. չկան անհրաժեշտ պայմաններ նրանց ազատ գործունեության և տեղաշարժման համար:

Նրանք դեռ շարունակում են երազել, որ իրենց վերաբերվենք որպես հավասարը հավասարի, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նրանք ունենան հավասար իրավունքներ, հավասար պայմաններ. . .